Վերամշակումը երաժշտությունն է իմ ականջներում

Դասապլան

Ներածություն

Այս դասապլանը նախատեսված է վերամշակված նյութերից երաժշտական գործիքներ պատրաստելու համար:

Նպատակներ

Աշակերտները կկարողանան.

- սովորել վերամշակման և շրջակա միջավայրի վրա դրա ազդեցությունների մասին,
- ուսումնասիրել տարբեր գործիքներ և բացահայտել այնպիսի հմտություններ, որոնք կիրառվում են գործիքները պատրաստելիս,
- հասկանալ այլոց փորձը վերամշակված նյութերից գործիքներ պատրաստելու համար,
- գործիք պատրաստել՝ օգտագործելով վերամշակված նյութեր,
- ներկել և ձևավորել գործիքը,
- ընդգծել անկյուններն արդեն իսկ պատրաստված գործիքում:

Պահանջվող ժամանակ/ տևողություն

Դասարանային աշխատանք 1. 45 րոպե այս գործունեությունը բացատրելու և աշակերտների հետ երաժշտական գործիքների պատրաստման գործընթացը քննարկելու:

Անհրաժեշտ ռեսուրսներ

- Վերամշակված տարաներ, ինչպիսիք են՝ գազավորված ըմպելիքի պլաստիկ շշերը, սուրճի բաժակները, փոքր ստվարաթղթե տուփերը և այլ իրեր
- յուղամատիտներ
- գունավոր գրիչներ
- մարկերներ
- կպչուն ժապավեններ
- սոսինձ
- բրինձ
- պաստա
- մետաղադրամներ
- շշերի կափարիչներ
- ռեսուրս 1. Թմբուկ:

Գործողություններ

Նախապատրաստական առաջադրանք ուսուցիչների/ առաջնորդների համար

Տեղեկացնել աշակերտներին, թե ինչ է նվագախումբը, և ինչպես է խմբի յուրաքանչյուր անդամ նվագում տարբեր գործիքներ:

Դասարանային աշխատանք 1

- Բաժանել աշակերտներին 3-4 հոգանոց խմբերի:
- Խմբերին բաժանել նյութեր, ներառյալ՝ սոսինձ, մկրատ և սպիտակ թուղթ:
- Աշակերտները պետք է բերեն նյութեր, որոնք կարող են վերամշակվել երաժշտական գործիքներ պատրաստելու համար: Մաքրել դրանք և ծածկել սպիտակ թղթով: (Որոշ նյութեր կարող են ներառել սուրճի, սննդի, ապակե տարաներ, տուփեր, պղնձե խողովակների հին կտորներ, նվերների փաթեթավորման պարագաներ, պլաստիկ փաթեթավորում, թել, պլաստիկ տարաներ կամ ցանկացած այլ իր, որը կգտնեն տանը, կամ դպրոցի տարածքում):
- Աշակերտները պետք է պատրաստեն իրենց երաժշտական գործիքը վերամշակված իրերից:
- Հանձնարարել աշակերտներին զարդարել իրենց երաժշտական գործիքները մատիտներով, մարկերներով և այլ պարագաներով:
- Ձևավորումն ավարտելուց հետո աշակերտները կարող են ստուգել հնչյունները՝ տարաների ներսում նյութեր դնելով, օրինակ՝ մակարոնեղեն, բրինձ, մետաղադրամներ և այլն:
- Հանձնարարել աշակերտների մի խմբի կիսվել՝ քննարկելու, թե ինչպես է հնչում իրենց երաժշտական գործիքը:

Գնահատում

Հարցրեք աշակերտներին, թե ինչ տեսակի գործիքներ կարելի է պատրաստել վերամշակելի կամ վերաօգտագործելի նյութերից:

Դեսուրս 1